

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

### ՄԻԻԹԱՐԵԱՆ ՀԱՐՑ ՎԻԷՆՆԱՅԻ

Շնորհակալութեամբ և գոհութեամբ սրտի ստացանք այս օրերս մեր պանդխտակից և կրօնակից եղբարց, Վիէննայի Գերարդոյ Միլիթարեան Հարց՝ մտաւորական գործունէութեան նոր իմն այլ նշան եղող պարբերական հրատարակութեան առաջին թերթն: Բազմալէպս, որ ցաւօք սրտի ականատես եղեր է երբեմն Եւրոպա Լրագիր և Եւրոպա Օրագիր թերթից մահանալուն, այսօր հըրճուանօք կ'ողջունէ Հանդէս Ամսօրեայ իւր այս նոր քրով ծնունդն և անակցութիւնն, մաղթելով նմա երկար կեանք առ 'ի զարգացումն մտաւորական յառաջագիմութեան ազգիս: — Սիրով կ'ընդգրկեմք նորա խմբագրութենէն առ մեզ եղած առաջարկն՝ մեր Հանդիսին մէջ ծանուցանելու այս նոր հրատարակութիւնն, առաջի դնելով մեր ընթերցողաց նորա հետեւալ



### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲԻՒՆ իրար կը յաջորդեն, քսցց իրարու չեն նմանիր, կ'ըսէ առաջը: Նոյնն ըսել հարկ է մարդկային գործոց համար, յաւելլով նաեւ՝ թէ ըստ իմիջ հարկ է մանաւանդ՝ այն փոփոխութիւնն ըստ ժամանակին, կամ « Գործ իմաստութեան է » ըստ Լատին իմաստնոյն: Սակայն դիտող ու խորհող ընկերութեան մէջ, ուր մարդս կը շարժի, նոյն ազատ փոփոխութիւնք ազատ չեն շատ մը դիտողութիւններէ եւ խորհրդածութիւններէ՝ որ յաջմէ եւ յափեւ կէ կ'ելին անոնց առջեւ, ի նպաստ կամ յընդդէմն, — ըստ որում առնուած նոր քայլերն ի լաւն կամ ի յոռին ուղղուած ըլլան:

Երատես գործել ժամանակին պահանջած փոփոխմամբ — աւասիկ Յառաջագիմութիւն: Գործն ու յառաջագիմութիւնը դիտել, դատել, եւ խորհրդածել — աւասիկ յառաջագիմութեան Ղեակը: Երկուքն ալ նշմարիտ մարդկային գործ՝ այսինքն մարդու արժանի:

Հրապարակական Թերթեր (օրագիրք եւ լրագիրք), պաշտօն առած են թէ՛ մէկն եւ թէ՛ միւսն ի հրապարակ հանել, ոչ ի յագուերդ հետաքրքրութեան միայն, այլ մանաւանդ՝ ի խրատ, յուղղութիւն եւ ի գզուշութիւն: Նա թէ հրապարակական Թերթերու գործն

եղած է ինքնին խորհրդածել ու դատել աշխարհի վրայ եւ աշխարհի առջեւ. որով ոչ միայն լրբեր՝ այլ եւ լրտես, այլ եւ դատաւոր կը հանդիսանան մարդկային գործոց ու խորհրդոց յառաջադէմ՝ կամ յետախաղաց շարժման, եւ այլն։ Եթէ այս դիտողութիւնք լռէին, եթէ գործն ու խօսքն իրենց առած փոփոխութեամբն ի հրապարակ չելէին, քանիներու համարձակ կ'ըլլար թիւր գործել եւ թիւր ուսուցանել։ — Եւ այս է օրագրի միակական նշանակութիւնը։

Բայց ճիշդ այստեղ է հանգուցին գլուխը. այս իսկ է էական եւ կենսական խնդիր՝ հասարակութեան համար. տեսնել թէ արդեօք լաւ թէ չար ծառայութիւն կ'ընեն, կ'ուղղեն թէ կ'ընեն իր փորձեցրնէն այն ատենականներն, այն առաջնորդներն, — « ի շինել թէ ի քակել » կեցած են։ — Այս պարզապէս անտարբեր բան չէ ընթերցողաց համար։ Թերթ մը՝ որչափ սիրուն դիմօք ալ ներկայանայ իւր ընթերցողաց, որչափ ծանրակշիռ ըստ նիւթոյն ըլլայ եւ յանկուցիչ ըստ կերպին, քանի երվնագեղ պէսպիսութեամբք ալ շողշողայ, կարելի է թէ յայտ կամ յայնմ գլխոյ դատապարտելի ըլլայ յիշեալ ղեկավարութեան պաշտօնին մէջ, թէ եւ շատերուն ռամկական համարումն ու հատկութիւնք վայելէ՝ մինչեւ որ զնոյն համարումն ու գբաղըր համակրութիւնն անտոյ ի վերջոյ զառնապէս քանել տայ որ մ'իրենց ծանր տուժիլը։ Բայտ այսմ՝ արդիւնաւոր կամ պարտաւոր է հրապարակական թերթին իւր սկզբանցն ողջ կամ փոքր, ուսմանցն եւ ուսումնասիրութեանցը հիմնական կամ հարեւանցի ըլլալուն, եւ վերջապէս տեսանելեաց առջին սփռած լուսոյն հանդարտ-յստակ կամ շացուցիչ-պղտոր ըլլալուն համեմատ, — եթէ՛ մտաւորական, եւ եթէ՛ մանսւսնող դատտիրարական ու բարոյական մասին, որն ալ որ եղած ըլլայ թերթին վախճանն ու յառաջադերեալ նպատակը. — Եւ այս է օրագրի միակական արժէքը։

Աւասիկ մեր Ամսօրեայ հանդիսին հրապարակական դաւանութիւնն՝ ինչպէս որ սովոր է ամէն թերթ յասպարէզ եղած օրէն տալ հասարակութեան. այսինքն յիշեալ ճշմարիտ տեսակէտէն դիտել, ըմբռնել եւ ըմբռնել տալ իրերը։

Յանձնեցինք ժառանգել պահանջումը յարգել։ Այո՛ւ. Վիեննայի Միխիթարեան Միաբանութիւնն ալ չէր կրնար ժամանակիս պահանջմանցն առջեւ անտարբեր կենալ՝ այսպիսի ատեն մ'որ առ հասարակ զարգացման փութոյն ընդհանրանալուն հետ ընթերցանութեան ալ սէրն օրըստօրէ յաճախած՝ պէսպէս եւ նորանոր ճարակ կը փնտռէ՝ 1. Ալ չէինք կրնաք ընդ երկար խուլ մնալ ինչպէս մեր ներքին զգացման թեպաղրութեանը. նոյնպէս եւս ամէն կողմէն հասած քաջախիզ յորդորներուն։ Եւ իրօք՝ գովելի կերպով մը յուզեալ արդի ընթերցասէր ժամանակիս իրաւացի խնդիրքներէն է՝ որ ծայր մ'ալ աւելնայ ազգային իմաստական ներդաշնակութեան մէջ. Եւ ահա այսօր խնդարիտ ծեռնաբանութեան կ'ըլլանք տոյն շրջանաւոր կամ պարբերական հրատարակութեանս, որն որ՝ մինչ համատեղ կերպարանօքն յողջոյն կը մատչի Ազգին, քաջայայտ ենք թէ սիրով պիտի դիմաւորուի ընդհանրութենէն, եւ եղբայրական այօք նկատուի բազմաթիւ պաշտօնակից թերթերէն՝ իբրեւ միւս եւս գործակից եւ ծեռնտու՝ Ազգին մտաւոր եւ բարոյական հաւրատութիւնն յաճախելու։

Հանդիսի մականոր Բարոյական, Ուսումնական, Արժեքատգիտական բառերն ըստ բաւականի բացատրիչ են, եւ պէտք չեն թողուր մանրամասն խոստաբանութեանց՝ որոնք այս կարգի գրաւոր գործոց յայտարարութեանցն կամ յառաջաքանն ներուն սովորական են։

ԲԱՐՈՅԱԿԱՆ մասին կը վերաբերի քնականապէս նաեւ Դատիարական (քրեագիտական), որուն կից են Դպրոցական վարչութեան կամ մեթոդներու ընտրու-

1 Յայտնի է թէ Վիեննայի Միխիթարեան Միաբանութեան աշխատասիրութեամբնատեն մ'եղած « Եւրոպա » անուն թերթը՝ նախ իբրեւ քաղաքական լրագիր, եւ յետոյ (— երբ հեռագրաց յաճախութիւնն հեռատասնիայց համար աւելորդ կ'ընէր այն « Դաբաթական լրեւրը ») — իբրեւ « Ընտանեկան օրագիր » կէր։

պարանափոխ եղած կը հրատարակուէր առ ի փորձ. սակայն փորձը վկայեց թէ դեռ նոյն առեն ընթերցասիրութեան վիճակը հիմակուանէն տարբեր, և ընդհանրապէս ժամանակներն գործոյն նպատաւօր ըլլալուն հարկ էր վերջապէս որ դադրէր, ինչպէս իրօք եղաւ։

ծիւնն ու բարեփոխութիւններ. եւայլն. եւ մենք ուրախութեամբ կը տեսնենք որ այս մասին բաւական յարգ եւ կարեւորութիւն տրուած է վերջին ժամանակներս: Նոյն վախճանին կը դիտենք ծառայեցընել նաեւ Նոր ա վէ պ. Մանր ա վէ պ (*nouvelles, anecdotes*), եւայլն գովարճալիքը:

**ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ** է առաւելապէս՝ գիտնական աշխարհի ճշդագոյն հետազոտութեանց եւ նորագոյն տեսութեանց արդիւնքն եւ ազգային կամ օտարազգի գիտնական եւ քանասիրական երկասիրութիւնները հաղորդել, կամ հր եւ է գրաւոր գործոյ յարգն ու արժէքը ծանօթացընել. — որ մասը սովորութիւն է Մատենագրական (*bibliographique*) կոչել:

**ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ** եւ անոր յարակից Տնտեսական (*industriel, économique*) հիւղին վերաբերեալներն են գլխաւորաբար մարդկային հարտարութեան վերջին (նորագոյն) կատարելագործութեանց գիւտերը կամ փորձերը:

Առաջիկայ թերթս քաղաքական լրագիր չըլլալով՝ կը շատանանք ամէն անգամուն վերջին քաղաքական դիպաց եւ ընդհանուր քաղաքականութեան ներկայ դիրքն ի հանդէս հանել Ամսօրեայ քաղաքական տեսութիւն մը տալով իւրաքանչիւր թւոյն վերջը:

Այս է շրջանն որուն մէջ կը յաճի առաջիկայ պարբերական հրատարակութիւնս. որուն գոյնն ու նկարագիրն արդէն յայտնի է վերագոյն եղած ակնարկութիւններէն:

Հանդէսս, ինչպէս անունը կը յայտնէ, ամսական է, 16 երեսէ բաղկացեալ. ամէն ամիս մէկ թիւ ելելով:

Բաժանորդութեան գինն է՝ Տարեկան 8 ֆրանք, եւ Վեցամսեայ՝ 5 ֆրանք կանխիկ վճարելի: Մէկ թիւ առանձին՝ կ'ընդունուի 1 ֆրանքի:

Խմբագրութեան կենդրոնավայրն է՝ Վիեննա, Միսիթարեան Միաբանութեան վանքը: Սակայն Արեւելքի համար՝ կ'ընդունին բաժանորդները նաեւ ի Կոստանդնուպոլիս եւ ի Զմիւռնիա նոյն Միաբանութեան վանատուններէն՝ առանց համբու ծախուց: Ուրիշ քաղաքներու համար՝ յիշեալ վանատուններէն կը սկսի հաշուիլ համբու ծախքը:

Վճարմանց դիմաց անմիջապէս լսկալագիր կամ Անդորրագիր կ'ընդունին բաժանորդը՝ նոյն վանատանց Գործակալացը (կամ ի Միաբանութենէ ցուցեալ ուրիշ Գործակալաց) ձեռքէն:

